



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

04 մարտի 2021 թվականի թիվ 37-Ա

ք. Երևան

#### «ՇԱՆԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմում-բողոքի հիման վրա 2021 թվականի հունվարի 25-ին հարուցված թիվ 1 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2021 թվականի հունվարի 25-ին Հանձնաժողով մուտքագրված «ՑԱՅԳ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմում-բողոքում նշված է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռում իրականացնող «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից Շիրակի մարզում հանրապետական սփռման տեսալսողական ծրագրից տարբերվող, փոփոխված տեսալսողական ծրագիր հեռարձակելու փաստի վերաբերյալ:

Ըստ Ընկերության՝ Հանձնաժողովի 14.01.2021թ-ի թիվ 11-Ա որոշման համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մարզային սփռման մրցույթի հաղթող և տրամադրվել է ՀՀ Շիրակի մարզի տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա, իսկ Հանձնաժողովի 15.01.2021թ-ի թիվ 14-Ա որոշմամբ Հեռարձակողը ճանաչվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի հաղթող և տրամադրվել է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա:

Դիմումում նշված է նաև, որ Հեռարձակողը, որին տրվել է ՀՀ տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա, Շիրակի մարզում իրականացնում է հանրապետական սփռման տեսալսողական ծրագրից տարբերվող, փոփոխված տեսալսողական ծրագիր՝ դրանով իսկ խախտելով օրենքը, Հանձնաժողովի որոշումը և վնասներ պատճառելով Ընկերությանը: Ընկերությունը խնդրում է հրատապ միջոցներ ձեռնարկել Հեռարձակողի կողմից Շիրակի մարզում հանրապետական սփռման տեսալսողական ծրագրից տարբերվող, փոփոխված տեսալսողական ծրագիրը դադարեցնելու ուղղությամբ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության

դիմումը՝ 2021 թվականի հունվարի 25-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի հունվարի 27-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները, իսկ Ընկերությանը առաջարկել է՝ ներկայացնել դիմում-բողոքում նշված համապատասխան ապացույցները, որոնք ուղղակիորեն փաստում են Հեռարձակողի կողմից թույլ տրված խախտումները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը Հանձնաժողով գրավոր բացատրություն չի ներկայացրել, իսկ Հանձնաժողովի գրությանը ի պատասխան 2021 թվականի փետրվարի 09-ին Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացվել է ապացույցների վերաբերյալ դիմում, որին կցվել են նաև դիմում-բողոքում նշված փաստերը հաստատող համապատասխան ապացույցները (տեսաձայնագրություններ):

Ընկերությունը իր բացատրություններում անդրադարձել է ինչպես «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի, այնպես էլ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի դրույթներին և անհերքելի է համարել այն փաստը, որ 2010 թվականից մինչև 25.01.2021թ-ը Հեռարձակողի կողմից հեռարձակվել է փոփոխված տեսալսողական ծրագիր և նշել, որ այն հակասում էր ինչպես նախկին օրենքին և լիցենզիայի պայմաններին, այնպես էլ նոր օրենքին: Նշվածի համար որպես փաստ Ընկերությունը նշել է Հեռարձակողի տեսաձայնագրությունից մի հատված, որտեղ Հեռարձակողը հեռուստադիտողներին հայտարարում է, որ «Շանթ» Գյումրի հեռուստածրագիրը դադարեցվում է 25.01.2021թ-ից:

Ընկերությունն անդրադառնալով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված նոր կարգավորումներին («Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդված), նշում է նաև, որ Հեռարձակողը ունենալով հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 07.08.2020թ-ից մինչ 25.01.2021թ-ը, իր տեսալսողական ծրագրի հեռարձակումն իրականացրել է փոփոխված կոնտենտով և նշված փաստի համար որպես հավաստում Ընկերությունը ներկայացրել է տեսաձայնագրություններ:

Ամփոփելով փաստերը, Ընկերությունը նշում է նաև, որ Հեռարձակողի գործողությունները չի բխում օրենքից՝ խախտելով իրավահարաբերության ծագման պահին գործող օրենքը, ներկայումս գործող օրենքը և մրցույթի արդյունքում կայացված Հանձնաժողովի որոշումը, ինչպես նաև Հեռարձակողի կողմից թույլ տրված խախտումները հանգեցրել են Ընկերության խոսքի ազատության, սեփականության իրավունքի և ազատ տնտեսական մրցակցության իրավունքի խախտմանը, քանի որ անհավասար և անարդար մրցակցային պայմանները Ընկերությանը պատճառում են ֆինանսական վնասներ, որն էլ ուղղակիորեն ազդում է Ընկերության գործունեության վրա:

Հանձնաժողովն իրականացնելով օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորությունները, Հանձնաժողովի նախագահի հանձնարարականի հիման վրա ուսումնասիրել է Ընկերության կողմից 2021 թվականի փետրվարի 09-ին ներկայացված նյութերը և ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի կողմից իր տեսալսողական ծրագրերը 2021 թվականի հունվարի 24-ի դրությամբ Շիրակի մարզում հեռարձակվում է փոփոխված, այն է՝ հիմնական ծրագրի մեջ ներառված հաղորդումները փոխարինվում են այլ հաղորդումներով:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված ապացույցների հետ, որի արդյունքում հայտնի է դարձել, որ հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողը Շիրակի մարզում հանրապետական սփռման տեսալսողական ծրագիրը հեռարձակում է փոփոխված՝ խախտելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որևէ ձևով չի կարող փոփոխվել, սակայն Հեռարձակողի կողմից Շիրակի մարզում հանրապետական սփռման տեսալսողական ծրագիրը հեռարձակվել է փոփոխված:

Հանձնաժողովը փաստում է նաև այն մասին, որ Ընկերության կողմից անդրադարձ է կատարվել նաև Հեռարձակողի կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի դրույթների խախտման վերաբերյալ, սակայն այս վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը չի անդրադառնում Հեռարձակողի կողմից «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի դրույթների խախտման փաստին, քանի որ միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ՀՀ Շիրակի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ՇՂ/4814/02/17 քաղաքացիական գործն ըստ հայցի Ընկերության ընդդեմ Հեռարձակողի և դեռևս վերջնական դատական ակտ չի կայացվել:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանում է.

«Հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողի տեսալսողական ծրագիրը սփռման ամբողջ տարածքում որևէ ձևով չի կարող փոփոխվել»:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 56-րդ հոդվածը սահմանում է.

«Սույն օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հայտնաբերված խախտումների առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենքով, ապա կարգավորող պետական մարմինն իրավախախտումը հայտնաբերելու օրվանից և (կամ) պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հայտնաբերված իրավախախտումների դեպքերի մասին տեղեկացվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում գրավոր նախազգուշացնում է խախտում կատարած անձին՝ պահանջելով վերացնել խախտումը և սահմանելով խախտումը վերացնելու համար ողջամիտ ժամկետ»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածի 12-րդ մասի, 55-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 56-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՇԱՆԹ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ գրավոր նախազգուշացում՝ խախտումները հետագայում վերացնելու հանձնարարությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

04 մարտի 2021թ.

ք. Երևան